

նա մեռաւ Տարսնում 269 թ.: Փիրմիլիանոս յայտնի է և իբրեւ մատենագիր: Մրան վերագրում են եկեղեցու հալածանաց պատմութիւն: Մեր պատմահայրը՝ Մովսէս Խորենացին որ քաջ ծանօթ է Եւսեբիոսի գրութեան հետ, ըստ երևութին նրանից է մատամբ քաղել այն տեղեկութիւնները որ նա հազորում է իւր պատմութեան Բ. դրբի ՀԵ. դրվիւմ: Յաւակցարար մի կէտ կայ Խորենացու այդ գլխում որ տեղիք է տալիս թիւրիմացութեան:

Մեր պատմագրի սովորական համառօտաբանութեան ու միջնախօսութեան շնորհիւ մինչև օրս պարզ չէ մեզ համար թէ մինչև որ ժամանակն էր հասցրել Փիրմիլիանոս իւր (այժմ կորած) պատմութիւնը:

«Սա (Փիրմիլիանոս) — առում է Խորենացին — բազում խօսս արար յորոց մի է պատմութիւն հալածանաց եկեղեցւոյ որ յառաջ յաւուրս Մաքսիմիանոսի և Գրեկոսի յարեաւ և որ հուսկ յետոյ յամն Գիոզիլեանոսի, շարայարեալ ի նա և զդործա թագաւորացն: Մի փոքր յետոյ աւելացնելով որ շատ կէտերում վատահիշի չէ այդ պատմութիւնը պատմիւր շարունակում է. «Սկի որ ինչ զինի մահուանն Խոսրովու մինչև ցթագաւորութիւնն Տրդատայ ի ժամանակս անիշխանութեանն պատմէ, ստոյգ համարելով երկրորդեմբ համառօտ բանիք: Բայց ոչ ինչ և ի Եւսեբիոսի Տրդատայ և յետ անոր ոչ հեղինակութեամբ և անգիտաւորութեամբ լինելով» և այլն:

Եթէ վերջին խօսքերը միևնոյն Փիրմիլիանոսին են վերաբերում որին ճանաչում է Եւսեբիոս խնդիր է ծագում ի նշգլէս կարող էր 269 թ. վախճանած հեղինակը իւր պատմութիւնը մինչև Տրդատի յաջորդների թագաւորութիւնը հասցնել: Ինչ թուում է թէ Խորենացու պատմութեան մէջ Փիրմիլիանոսին նուիրում գրուիւր կամ աղաւաղւած է կամ մինչև օրս ճշդիւ չէ թարգմանւած կամ ինքը Խորենացին մի կամայ թէ ակամայ սխալանքի մէջ է ընկել:

Պարզենք:

Քանի որ 269 թ.ին վախճանւած հեղինակը չէր կարող Տրդատի յաջորդների ժամանակակիցը լինել ուստի պէտք է ենթադրուի մի ուրիշ՝ յետադայ ժամանակի պատմական երկասիրութիւն, որ հիմք է ծառայել քերթողահօր պատմութեան ՀԵ. գլխին: Ես կարծում եմ որ խօսքը Լանկտանցիոսին վերագրող De mort Persecutorum (Յաղագս մահու հալածչաց) երկասիրութեան մասին պիտի լինէր կամ նոյն հեղինակի մի ուրիշ երկասիրութեան: Յիշենք որ Լանկտանցիոսի լիակատար անունն է համարւում Փիրմիլիանոս Լանկտանցիոս: Հրաւիրում ենք այս խնդրի վրայ բանասէրների ուշադրութիւնը:

Ե. Մ.



ԱԶԳԱՅԻՆ

Յայտնի է որ Ազգային կենդրոնական վարչութեան որոշմամբ՝ Կ. Պօլսի Հայոց Պատրիարքարանի անդուկից վճարելու յիշուէն ոսկի է սահմանուած և կենդրոնական Ուսումնական Խորհրդի տրամբրութեան տակ գրած: Այդ գումարը պիտի գրուի իբրեւ մրցանակ լաւագոյն դասագրքերի հեղինակներին ի քաջալերութիւն և ի զիւրութիւն նոցա երկրի տպագրութեան: Իերում ենք մի ցանակաբաշխութեան կանոնագրի մի քանի կարեւոր յօդուածները քաղուած օրէն:

Յօդ. 3. Երկուց արժանեաց և կարեւորութեան համեմատ կամ 50 ոսկւոյ գումարն ամսօրջապէս կը տրուի մէկ հեղինակի և կամ կը բաժնուի մի քանի հեղինակաց մէջ:

Յօդ. 5. Վարձադրեալ հեղինակք պարտաւոր են կենդրոնական Ուսումնական Խորհրդոյ կողմէ նշանակուած թուով իրենց գործոց տպագրեալ օրինակներէն յանձնել նոյն Խորհրդոյ որ զայնս ձրիաբար կը բաշխէ կուտանդնուպօլոյ և գաւառաց ազգային վարժանաց աղքատիկ ուսանողաց:

Յօդ. 7. Մրցման ներկայանալի գործերն պէտք է որ սեպտ. 1-էն մինչ փետր. 1- յըղուին Կենդրոնական Ուսումնական Խորհրդոյ Դիւանին: սոյն պայմանադրամուն լամպիւն յետոյ ներկայացուած գործոց քննութիւնը կը յետաձգի յաւորդ տարւոյն:

Յօդ. 8. Անհրաժեշտ է որ ներկայացեալ գործին պատրաստուած լինեն Կենդրոնական Ուսումնական Խորհրդոյ կողմէ հրատարակեալ ուսմանց ծրագրոց համաձայն եղանակաւ:



ՆՈՐ ՍՏԱՅԱՆԻ ԳՐԻՔԵՐ

Ս. ԷՋՄԻԱՅՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԵՒ ՎԱՐԱՐԱՏԻ
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆՈՒՆՈՎ:

Անցեալ տարիները „Արարատի“ և „Սշակի“ միջոցաւ խնդիր յարուցուեց թէ անհրաժեշտ է մտածել Մայր-Աթոռի մատենադարանը հարստացնել նոր լոյս տեսնող հայերէն զբրքերով և խնդիր ուղղուեց մեր հեղինակներին և հրատարակիչներին: որ չլիանան մի-մի օրինակ իւրեանց լոյս ընծայած զբրքից իւրեւ նուէր ուղարկել այդ մեծ ազգային հիմնարկութեան: Այդ մտքով Տփլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը մինչև անգամ մի որոշում տուաւ որ իւրեանց հրատարակութիւններից երկ-երկու օրինակ պիտի ուղարկեն մեր մատենադարանին: Մի առժամանակ միայն ճշտութեամբ կատարուեց այս որովհետև անցեալ տարի հրատարակած զբրքից օրինակներ չենք ստացել: 1893 թւի ընթացքում ստացուեցան բաւական թւով զբրքեր, որոնք բոլորն էլ Մայր Աթոռի մատենադարանը դրուելով կանոնաւոր ցույցակի մէջ են մտել ուստի Մատենադարանակաւ իւր պարտքն է համարում շնորհակա-

լութիւն յայտնել այդ անձանց: Իսկ „Արարատի“ խմբագրութիւնը ցանկանալով վաղուց ի վեր զբացուող մի մեծ կարիքի բաւականութիւն տալ անհրաժեշտ համարեց հենց իւր առաջին նիստում „Արարատի“ բովանդակութեան վրայ մի նոր բաժին աւելացնել՝ *Библиография* (Bibliographia), ուր ըստ կարելոյն լիակատարութեամբ կը յիշատակուին լոյս տեսած զբրքերի անունները: հրատարակութեան տեղը զբրքի զինը և նոցա մասին լոյս տեսած քննադատական յօդուածները: Ինչպէս յայտնի է, „Հանդէս Ամսօրեայ“ ն արդէն ունի այդ բաժինը, բայց քանի որ նա այնքան չի տարածուած, իսկ „Արարատը“ ամէն մի ուսուցչի և քահանայի ձեռքն է ընկնում ուստի կարծում ենք նոցա մեծ զիւրութիւն տուած կը լինենք՝ տեղեկացնելով նոցա թէ զբրքերի հրատարակման տեղը և թէ զինը: Բայց որպէսզի մեր տուած տեղեկութիւնները ճիշտ լինին, անհրաժեշտ է որ զբրքատէրերը նոյն իսկ իրանց օգուտը ի նկատի առնելով կամ իրանց զբրքից մեզ մի-մի օրինակ ուղարկեն, կամ ճիշտ տեղեկութիւններ հաղորդեն զիբրքը լոյս տեսնելուց անմիջապէս յետոյ: Եթէ մեր մէջ ընթերցասիրութիւնը և զբրքերի տարածուիլը զանգաղ քայլերով է առաջ ընթանում, դրան քիչ չէ նպաստում նաև այն հանգամանքը որ շատ անգամ չի իմացուում թէ ումից և ինչ զբնով կարելի է ցանկացած զիբրք ձեռք բերել:

Շնորհակալութեամբ ստացուել են հետևեալ
գրքերը:

1. „Սուրճ“ ամսագրի լոյս տեսնելուց սկըսած մինչև 1893 թ. կիսամեակը՝ 9 հատորի մէջ փառակազմ: „Սուրճի“ խմբագրութիւնը զբրքերը ուղարկել է Մորին Վեհափառութեան անունով Մայր Աթոռի մատենադարանի համար: Մեր պարբերական հրատարակութիւնների մէջ սա առաջին օրինակն է, որ ամբողջութեամբ ունինք մեր Մատենադարանում: